4868
Ա/Ճ-122014/ο

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ N 40

ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10.12.2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 10.12.2014 թվականի թիվ 11 նիստի օրակարգը.
1. Հայաստանի Հանրապետության Կայոց ձորի մարզի Վայք համայնքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին.
2. Վայքի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ծնողական վճարների 2015 թվականի ամսական դրույքաչափերը սահմանելու մասին.
3. Համայնքի 2015 թ. բյուջեի նախագծի քննարկում:
4. Վայքի քաղաքապետարանի սեփականություն հանդիսացող <<ԳԱԶ-3102-121>> մակնիշի 883 ԼԼ 11 համարանիշի ավտոմեքենան օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին:
5. <<Վայք գրուպ>> ՓԲԸ-ին պատկանող ք. Վայք, Նարեկացու 12 և Նարեկացու 14 հասցեներում գտնվող համապատասխանաբար 1.5 հա և 1.0հա բնակավայրերի նպատակային նշանակության հողատարածքների նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության կատեգորիա տեղափոխելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
6. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
7. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐՊԱՆ

ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ N 41-Ն

ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<< Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ, 19-րդ կետերին, 34-րդ հոդվածի 2-րդ կետին և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներին, << Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի և 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Վայքի քաղաքային համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների 2015 թվականի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000դրամ

բ. սույն կետի „ա„ ենթակետով չնախատեսված 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000դրամ

գ. սույն կետի „ա„ ենթակետով չնախատեսված 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական օբյեկների համար՝ 50000դրամ

դ. սույն կետի „ա„ ենթակետով չնախատեսված 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական օբյեկների համար՝ 70000դրամ

ե.մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ 3000դրամ

զ.20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝5000դրամ:

2) Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000դրամ

բ. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում են նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի

գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի „ա„ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:
գ. նախատեսվում է միայն կցակույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմանբ կիրառվում են նոր շինարարության համար սահմանված նորմերը:
3) Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:
4) Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանվում է 3000դրամ:
5)Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ:
6) Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում՝
ա. բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:
բ. հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ/ սեղմված բնական գազերի կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:
գ. խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000դրամ:
դ. համայնքի տարածքում հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1000դրամ՝յուրաքանչյուր եռամսյակի համար:
ե. համայնքի տարածքում ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1000դրամ՝յուրաքանչյուր եռամսյակի համար:
7) Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50000 դրամ:
8) Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա. առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ
դ. խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ
ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ
զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:
9) Համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 500 դրամ:
10) Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ
գ. այլ արտաքին գովազդի համար՝ 600 դրամ
դ. դատարկ գովազդային վահանակների յուրաքանչյուր տեղի համար՝ 700 դրամ:
11) Վայքի քաղաքային համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 3000 դրամ:
12) Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 10000 դրամ:
13) Վայք համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000դրամ:

14) Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված՝ տեխնիկա - տնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու ավարտված շինության շահագործումը փաստագրելու համար տեղական վճար սահմանվում է 25 000 դրամ:

15) Վայքի քաղաքային համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում՝ անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական վճար սահմանվում է 20 000 դրամ:

16) Վայքի քաղաքային համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար տեղական վճար սահմանել՝ յուրաքանչյուր մասնակցից 15 000 դրամ, հաստատավորման համար՝ 5000 դրամ:

17) Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանվում է

ա. կենցաղային աղբի համար՝ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ ամսեկան 2500դրամ:

18) Վայքի քաղաքային համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանվում է 500 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2014 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ

2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ

5. ԴԱՎԹՅԱՆ ԹԱՄԱՐԱ

6. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

7. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

8. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ N 42

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 -րդ կետին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում սահմանել 2015 թ.-ի համար ուսման վարձեր և ծնողական գանձումներ՝ըստ կից ներկայացվող հավելվածի

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
6. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
7. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ **Վ. ԱՍԼԱՆՅԱՆ**

Հավելված 1
Համայնքի ավագանու
10.12.2014թ. թիվ 42 որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. <<ՎԱՅՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-Ի ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Մասնագիտության անվանումը	Դրույքաչափը ՀՀ դրամով
1.	Դաշնամուրի դասարան	3000/երեք հազար/
2.	Վոկալի դասարան	3000/երեք հազար/
3.	Ջութակի դասարան	3000/երեք հազար/
4.	Կերպարվեստի բաժին	2000/երկու հազար/
5.	Դուդուկի, շվիի դասարան	անվճար
6.	Քանոնի դասարան	անվճար

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/հ		Դրույքաչափը ՀՀ դրամով
1.	Միջազգային և հանրապետական մրցույթներում դափնեկրի համար	անվճար
2.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար	անվճար
3.	Հաշմանդամ երեխայի համար	անվճար
4.	Նույն ընտանիքից 3 և ավելի երեխաների համար	1-ը՝ անվճար
5.	Միաժամանակ 2 խմբում ընդգրկված երեխայի համար	1-ը՝ 50 %
6.	Նույն ընտանիքից 2 երեխաների համար	1-ը՝ 50 %

2. <<ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ

Ամսական ծնողական վճար-3500դրամ

3. <<ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ

Ամսական ծնողական վճար-3500դրամ

4. <<ՎԱՅՔԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀՈԱԿ

Ամսական ծնողական վճար-2500դրամ

Հ/հ		Դրույքաչափը ՀՀ դրամով
1	Երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար	անվճար
2	Հաշմանդամ երեխայի համար	անվճար
3	Նույն ընտանիքից 3 և ավելի երեխաների համար	1-ը՝ անվճար
4	Միաժամանակ 2 խմբում ընդգրկված երեխայի համար	1-ը՝ 50 %
5	Նույն ընտանիքից 2 երեխաների համար	1-ը՝ 50 %

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մուշկամբարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ N 43

ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Վայքի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի նախագիծը՝ ըստ կից հավելվածի.

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
6. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
7. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

ՆԱԽԱԳԻԾ

Վայք համայնքի ավագանու

2014 թվականի դեկտեմբերի 10 N 43 որոշմամբ

ՎԱՅՔԻ ՏԳԲ

(համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՍԻԼ ԱՍԼԱՆՅԱՆ

(անունը, ազգանունը, հայրանունը)

Կ. Տ.

ՀԱՏՎԱԾ 1
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝		147000,0	147000.0	0.0
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160), այդ թվում՝	7100	25041,0	25041.0	x
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112), այդ թվում՝	7131	3300,0	3300.0	x
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		2500,0	2500.0	x
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		800,0	800.0	x
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝	7136	15500,0	15500.0	x
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		15500,0	15500.0	x
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝	7145	3841,0	3841.0	x
1131	Տեղական տուրքեր, (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144 + տող 1145), այդ թվում՝	71452	3841,0	3841.0	x
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար		200,0	200.0	x
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		1240,0	1240.0	x
1137Ա	- ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում		670,0	670.0	x
1137Բ	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում		570,0	570.0	x
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		5,0	5.0	x

1139	զ)Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված և սեղմված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար		1500,0	1500.0	x
1139Ա	զ)Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված և սեղմված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար		1350,0	1350.0	x
1139Բ	զ)Համայնքի տարածքում տեխնիկական հեղուկների թույլտվության համար		150,0	150.0	x
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		800,0	800.0	x
1144	ի) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		10,0	10.0	x
1145	լ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		50,0	50.0	x
1146	Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար	1146Ա	36,0	36.0	x
1150	1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝	7146	2400,0	2400.0	x
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1152 + տող 1153), այդ թվում՝		2400,0	2400.0	x
1152	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տրամադրելու համար		1100,0	1100.0	x
1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար		1300,0	1300.0	x
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝	7300	111668,3	111668.3	0.0
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258), որից՝	7331	111668,3	111668.3	x
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող		92878,5	92878.5	x
1254	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1255 + տող 1256), այդ թվում՝		18789,8	18789.8	x

1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ		18789,8	18789.8	x
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝	7400	10290,7	10290.7	0.0
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + 1334), այդ թվում՝	7415	2920,0	2920.0	x
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		1300,0	1300.0	x
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		1620,0	1620.0	x
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, (տող 1341 + տող 1342 + տող 1343), այդ թվում՝	7421	5346,7	5346.7	x
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		5346,7	5346.7	x
1342Ա	ա)ՔԿԱԳ համար		5346,7	5346.7	x
1350	3.5 Վարչական գանձումներ, (տող 1351 + տող 1352), այդ թվում՝	7422	1000,0	1000.0	x
1351	Տեղական վճարներ		1000,0	1000.0	x
1351Ա	-տեղական վճարներ հողհատկացման չափագրման համար		700,0	700.0	x
1351Բ	-տեղական վճարներ աճորդի մասնակցելու համար		100,0	100.0	x
1351Գ	- տեղական վճարներ շինարարության ավարտը փաստագրելու համար		200,0	200.0	x
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից(տող 1361 + տող 1362), այդ թվում՝	7431	200,0	200.0	x
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		200,0	200.0	x
1390	3.9 Այլ եկամուտներ, (տող 1391 + տող 1392 + տող 1393), այդ թվում՝	7451	824,0	824.0	0.0
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		824,0	824.0	x

ՀԱՏՎԱԾ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100)	106826,0	106826,0	0,0
2100	1	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝	62801,0	56801,0	6000,0
2110	1	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ որից՝	56234,3	50234,3	6000,0
2111	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	56234,3	50234,3	6000,0
2130	1	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝	5346,7	5346,7	0,0
2131	1	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	5346,7	5346,7	0,0
2160	1	6	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	1220,0	1220,0	0,0
2161	1	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1220,0	1220,0	0,0
2170	1	7	0	Պետական պարտքի գծով գործառնություններ, որից՝	0,0	0,0	0,0
2171	1	7	1	Պետական պարտքի գծով գործառնություններ	0,0	0,0	0,0
2400	4	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝	-5165,0	835,0	-6000,0
2420	4	2	0	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն, որից՝	835,0	835,0	0,0
2421	4	2	1	Գյուղատնտեսություն	835,0	835,0	0,0
2490	4	9	0	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	-6000,0	0,0	-6000,0
2491	4	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-6000,0	0,0	-6000,0
2500	5	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 2510 + տող 2520 + տող 2530 + տող 2540 + տող 2550 + տող 2560), այդ թվում՝	7600,0	7600,0	0,0
2510	5	1	0	Աղբահանում, որից՝	7600,0	7600,0	0,0
2511	5	1	1	Աղբահանում	7600,0	7600,0	0,0
2800	8	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2810 + տող 2820 + տող 2830 + տող 2840+ տող 2850 + տող 2860), այդ թվում՝	24990,0	24990,0	0,0
2820	8	2	0	Մշակութային ծառայություններ, որից՝	24990,0	24990,0	0,0
2821	8	2	1	Գրադարաններ	4970,0	4970,0	0,0
2824	8	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	20020,0	20020,0	0,0

2900	9	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + տող 2930 + տող 2940+ տող 2950 + տող 2960 + տող 2970 + տող 2980), այդ թվում՝	15600,0	15600,0	0,0
2950	9	5	0	Լսողության զարգացման չդասավորվող կրթություն, որից՝	15600,0	15600,0	0,0
2951	9	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	15600,0	15600,0	0,0
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050+ տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), այդ թվում՝	1000,0	1000,0	0,0
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից՝	1000,0	1000,0	0,0
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	1000,0	1000,0	0,0

ՀԱՏՎԱԾ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050 + տող 5000 + տող 6000) այդ թվում՝	x	107550,0	107550.0	0.0
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող 4100 + տող 4200 + տող 4300 + տող 4400 + տող 4500 + տող 4600 + տող 4700) այդ թվում՝	x	107550,0	107550.0	x
4100	1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 4110 + տող 4120 + տող 4130) այդ թվում՝	x	48905,0	48905.0	x
4110	ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող 4111 + տող 4112 + տող 4114) որից՝	x	48905,0	48905.0	x
4111	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	48905,0	48905.0	x
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4210 + տող 4220 + տող 4230 + տող 4240 + տող 4250 + տող 4260), այդ թվում՝	x	9701,0	9701.0	x
4210	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող 4211 + տող 4212 + տող 4213 + տող 4214 + տող 4215 + տող 4216 + տող 4217), որից՝	x	3018,7	3018.7	x
4212	- Էներգետիկ ծառայություններ	4212	2136,7	2136.7	x
4213	- Կոմունալ ծառայություններ	4213	100,0	100.0	x
4214	- Կապի ծառայություններ	4214	740,0	740.0	x
4215	- Ապահովագրական ծախսեր	4215	42,0	42.0	x
4220	ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ (տող 4221 + տող 4222 + տող 4223), որից՝	x	300,0	300.0	x
4221	- Ներքին գործուղումներ	4221	300,0	300.0	x
4230	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4231 + տող 4232 + տող 4233 + տող 4234 + տող 4235 + տող 4236 + տող 4237 + տող 4238), որից՝	x	1682,3	1682.3	x
4232	- Համակարգչային ծառայություններ	4232	732,3	732.3	x
4234	- Տեղակատվական ծառայություններ	4234	150,0	150.0	x
4237	- Ներկայացուցչական ծախսեր	4237	500,0	500.0	x
4238	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	300,0	300.0	x
4240	ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4241), որից՝	x	250,0	250.0	x
4241	- Մասնագիտական ծառայություններ	4241	250,0	250.0	x
4250	ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր) (տող 4251 + տող 4252), որից՝	x	650,0	650.0	x
4251	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	500,0	500.0	x
4252	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	150,0	150.0	x
4260	ՆՅՈՒԹԵՐ (տող 4261 + տող 4262 + տող 4263 + տող 4264 + տող 4265 + տող 4266 + տող 4267 + տող 4268), որից՝	x	3800,0	3800.0	x
4261	- Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	500,0	500.0	x
4264	- Տրանսպորտային նյութեր	4264	1200,0	1200.0	x
4267	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	400,0	400.0	x
4268	- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1700,0	1700.0	x

4500	1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 4510 + տող 4520 + տող 4530 + տող 4540), այդ թվում՝	x	47190,0	47190.0	x
4530	ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող 4531 + տող 4532 + տող 4533), որից՝	x	47190,0	47190.0	x
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	47190,0	47190.0	x
4600	1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող 4610 + տող 4630 + տող 4640), այդ թվում՝	x	1000,0	1000.0	x
4630	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ) (տող 4631 + տող 4632 + տող 4633 + տող 4634), որից՝	x	1000,0	1000.0	x
4634	- Այլ նպաստներ բյուջեից	4729	1000,0	1000.0	x
4700	1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող 4710 + տող 4720 + տող 4730 + տող 4740 + տող 4750 + տող 4760+ տող 4770), այդ թվում՝	x	754,0	754.0	x
4720	ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ (տող 4721 + տող 4722 + տող 4723 + տող 4724), որից՝	x	30,0	30.0	x
4723	- Պարտադիր վճարներ	4823	30,0	30.0	x
4770	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 4771 + տող 4771Ա), որից՝	x	724,0	724.0	0.0
4771	- Պահուստային միջոցներ (վարչական բյ.)	4891	724,0	724.0	x
4771Ա	- Պահուստային միջոցներ (ֆոնդային բյ.)	4891	0,0	x	0.0
5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող 5100 + տող 5200 + տող 5300 + տող 5400), այդ թվում՝	x	6000,0	x	6000.0
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5110 + տող 5120 + տող 5130), այդ թվում՝	x	6000,0	x	6000.0
5120	ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (տող 5121 + տող 5122 + տող 5123), որից՝	x	6000,0	x	6000.0
5121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	5000,0	x	5000.0
5122	- Վարչական սարքավորումներ	5122	1000,0	x	1000.0
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	0,0	x	0.0
6000	Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6100 + տող 6200 + տող 6300 + տող 6400), այդ թվում՝	x	-6000,0	x	-6000.0
6100	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6110 + տող 6120 + տող 6130), այդ թվում՝	x	-3000,0	x	-3000.0
6130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8131	-3000,0	x	-3000.0
6400	ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ(տող 6410 + տող 6420 + տող 6430 + տող 6440), այդ թվում՝	x	-3000,0	x	-3000.0
6410	ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8411	-3000,0	x	-3000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ N 44

ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱԶ-3102-121 ՄԱԿՆԻՇԻ 883 ԼԼ 11 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԹԵԹԵՎ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16րդ հոդվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով «Տիգրիս» ՍՊԸ-ի գնահատման հաշվետվությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝քաղաքապետարանի սեփականություն հանդիսացող Գազ-3102-121 մակնիշի 883 ԼԼ 11 պետհամարանիշի մարդատար ավտոմեքենան օտարելու վերաբերյալ քաղաքապետի առաջարկությանը:
2. Հաստատել «Տիգրիս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ավտոմեքենայի մեկնարկային գինը՝780 000 դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
6. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
7. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ N 45

<< ՎԱՅՔ ԳՐՈՒՊ>> ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14.3 հոդվածին, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 28.1 կետին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն <<Վայք գրուպ>> ՓԲԸ-ին պատկանող ք. Վայք, Նարեկացու փող. 12 և Նարեկացու 14 հասցեներում գտնվող համապատասխանաբար 1.5 հա և 1.0 հա հողատարածքների նպատակային նշանակությունը որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության կատեգորիա փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները ենթակա են պետական գրանցման:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
6. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
7. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԱՍԼԱՆՅԱՆ